ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2022 թվականի N 2005 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1499-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Կենդանիների, կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, հանրապետության տարածքում փոխադրման համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր, անվտանգության սերտիֆիկատներ և համապատասխանության տեղեկանք տալու կարգը, անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի, անվտանգության սերտիֆիկատների և համապատասխանության տեղեկանքի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի N 1241-Ն որոշումն

ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1499-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման նախաբանը «Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.» բառերից առաջ լրացնել «Հիմք ընդունելով «Մնդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետը» բառերով.

2) որոշման N 2 հավելվածի N 1 ձևում «նույնականացման տվյալները» բառերը փոխարինել «նույնականացման համարը» բառերով.

3) որոշման N 2 հավելվածի N 2 ձևում «համարակալման/ականջապիտակի/ համարը, նույնականացման տվյալները» բառերը փոխարինել «նույնականացման համարը» բառերով.

4) որոշման N 2 հավելվածի N 3 ձևում «(նշել կենդանական ծագման մթերքի տեսակը, անվանումը, քանակը /հատ, կգ/)» բառերը փոխարինել «(նշել կենդանու նույնականացման համարը, կենդանական ծագման հումքի կամ մթերքի տեսակը, անվանումը, քանակը /հատ, կգ/)» բառերով.

5) որոշման N 2 հավելվածի N 4 ձևը «կենդանու» բառից հետո լրացնել «նույնականացման համարը,» բառերով.

6) որոշման N 2 հավելվածի N 5 ձևը «սպանդից ստացված» բառերից առաջ լրացնել «կենդանու նույնականացման համարը,» բառերով.

7) որոշման N 2 հավելվածի N 5.1 ձևը «սպանդից ստացված» բառերից առաջ լրացնել «կենդանու նույնականացման համարը,» բառերով.

8) որոշման N 3 հավելվածի N 6a ձևում «Ականջի համարը» բառերը փոխարինել «Նույնականացման համարը,» բառերով.

9) որոշման N 6 հավելվածի N 8 ձևում «նույնականացման տվյալները» բառերը փոխարինել «նույնականացման համարը» բառերով.

10) որոշման N 7 հավելվածի ձև 1 Անասնաբուժական վկայականի հավելվածում «Նույնականացման տվյալները (ՏՀՀ)» բառերը փոխարինել «Նույնականացման համարը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ